ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ
ք.Երևան, Ն. Զարյան 27, հեռ. (+374 11) 518 201, էլ. փոստ arabkir@yerevan.am

№ _____ «_____»_____ 202 թ.

«Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ -Ի ՏՆՕՐԵՆ՝

Հ.ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՀՐ.ԱՃԱՌՅԱՆ 36, ԲՆ.27

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Ս.ՀՈՍՈ» ՍՊԸ-ի միջև 01.06.2021թ. կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/28 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները /այսուհետ՝ աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վճարել դրա համար»:

Աշխատանքների վերջնաժամկետը ըստ պայմանագրի սահմանված է եղել 17.12.2021թ. և այդ ընթացքում Ձեր կողմից կատարվել է պայմանագրային ծավալի 63.8%-ը:

24.12.2021թ. Ընկերության կողմից ստացել ենք գրություն՝ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում կատարվող հետագա աշխատանքների անհնարինության մասին՝ պատճառաբանելով տնօրենի մոտ ախտորոշված հետապնդող հիվանդությունը, որը անհամատեղելի է դարձնում աշխատանքի հետևողական լինելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ «Պայմանագիրը լուծվում է միակողմանի, եթե՝ ա/ Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, բ/ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը, գ/ Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին, դ/ Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից /2982814 ՀՀ դրամ գումարի չափով/՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐԱՄ ԱԶԱՏՅԱՆ**

կատ. Մ.Գորգինյան
հեռ.011-518-191